ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/25

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Վարդանյանի,
«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Դ. Վարդանյանի, Մ. Սևումյանի, Լ. Խալաթյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթ, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 31.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կասեցնել ընթացակարգը՝ մինչև իրավասու մարմնից պատասխան ստանալը:

2. Իրավասու մարմնի կողմից ընտրված մասնակցի ներկայացրած սարքը անհամապատասխան համարելու դեպքում պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղարկել 22.03.2021թ.-ին-կայացած նիստում 4-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը և մերժել ընտրված մասնակից ճանաչված մասնակցի հայտը և շարունակել գնահատման գործընթացը՝ հաջորդաբար տեղ զրաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման համար:

3. Իրավասու մարմնի կողմից տեխնիկական բնութագրերի ՀՀ և միջազգային նորմերին անհամապատասխան ճանաչելու դեպքում չեղյալ հայտարարել նշված չափաբաժնով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 31.03.2021թ.-ին:

01.04.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/25 համարի ծածկագիրը:

01.04.2021թ.-ին ներկայացված գրավոր միջնորդության հիման վրա՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

09.04.2021թ.-ին, 15.04.2021թ.-ին և 23.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.04.2021թ.-ին:

2. «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն 31.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2020թ. դեկտեմբերի 18-ին հայտարարվել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում վերնագրով ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5 ծածկագրով բաց մրցույթը, որի բացումը նախատեսված էր 2021թ. փետրվարի 28-ին, սակայն հրավերում տեղի ունեցած փոփոխության պատճառով հայտերի բացումը տեղափոխվեց սույն թվականի մարտի 5-ին: Այս մրցույթով նախատեսված է ձեռք բերել տարբեր բժշկական սարքավորումներ, որոնց թվում, չորրորդ չափաբաժնով նախատեսված է հինգ ռենտգեն ապարատների ձեռքբերում:

Տեխնիկական բնութագրերի ուսումնասիրությունից հետո մեր ընկերությունը հետաքրքրված էր մրցույթին մասնակցությամբ: Ուշադիր հետևում էինք ներկայացվող պարզաբանման հարցումներին, ինքներս էլ ներկայացրել ենք երկու պարզաբանման հարցում, որոնց Պատվիրատուն, օրենքով նախատեսված կարգով պատասխանել է: Տարբեր հարցումներ վերաբերվում էին տեխնիկական բնութագրիչներին, որոնցից որոշները հաշվարկային էին, բայց միջակայքեր նշված չէին: Մեզ հետաքրքրող որոշակի բնութագրիչների վերաբերյալ Պատվիրատուն պատասխանեց, որ այդ բնութագրիչները պետք է ընդունել որպես նվազագույն թույլատրելի: Մեր ընկերության կողմից ներկայացված մյուս հարցումը վերաբերում էր պահանջվող որակի սերտիֆիկատներին: Ըստ պահանջի՝ մասնակիցը պիտի հավաստի, որ ներկայացված սարքավորումն ունի ISO 9001 կամ 13485 կարգի որակի վկայականներ, սակայն ոչինչ նշված չէ CE սերտիֆիկատի մասին, ինչը, մեր կարծիքով, պակաս կարևոր չի ռենտգեն սարքավորումների որակային հատկանիշները գնահատելու համար: Ամեն դեպքում, Պատվիրատուի պահանջը մնաց նույնը, CE սերտիֆիկատի պահանջ չներկայացվեց:

Հայտերի բացումը նախատեսված կարգով տեղի ունեցավ սույն թվականի մարտի 5-ին, armeps համակարգի միջոցով: 4-րդ չափաբաժնի համար հայտ էին ներկայացրել 7 մասնակիցներ: Ըստ ներկայացված հայտերի՝ բոլոր մասնակիցների գնառաջարկները գերազանցում էին 110,000,000.00 ՀՀ դրամը, բացի առաջին տեղ զբաղեցրած մասնակցից, որի գնառաջարկը ընդամենը 82,900,000.00 ՀՀ դրամ էր (արձանագրություն #11): Այնուհետև Պատվիրատուն կասեցրեց նիստը՝ հայտերում առկա անհամապատասխանությունները շտկելու պահանջներ ուղարկելով մասնակիցներին: Հատկանշական է, որ բոլոր մնացած 6 մասնակիցների հայտերի տեխնիկական բնութագրերում առկա էին անհամապատասխանություններ, բացի առաջին տեղ զբաղեցրած մասնակցից:

Ուսումնասիրելով այդ մասնակցի ներկայացրած փաստաթղթերը, պարզ դարձավ, որ հավելված 1.1-ում զետեղված բնութագիրն ուղղակիորեն պատճենված է մրցույթի տեխնիկական բնութագրից, որևէ պարամետր փոփոխված չէ, ինչի արդյունքում էլ, Պատվիրատուն, շտկման պահանջ ներկայացնելու կարիք չի ունեցել: Շտկումների տրամադրումից հետո, հաշվի առնելով, որ մրցույթը հայտարարված էր ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, կայացան գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, որի ընթացքում որևէ այլ, ավելի ցածր գնառաջարկ չհնչեցվեց մասնակիցներից և ոչ մեկի կողմից, քանի որ ներկայացված 82,900,000.00 ՀՀ դրամ նվազագույն գնառաջարկը 5 թվային ռենտգեն սարքերի համար անիրատեսական է: Բանակցություններից հետո մրցույթի գնահատող հանձնաժողովը պայմանագիր կնքելու մասին որոշում կայացրեց և հրապարակեց համապատասխան հայտարարությունը gnumner.am կայքում, սույն թվականի մարտի 23-ին սահմանելով 10 օր անգործության ժամկետ.

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունից հետո մեր ընկերությունը գրավոր հարցումով դիմել է մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով պարզաբանել, արդյոք առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած սարքի համապատասխանության ստուգման համար մասնակցից պահանջվել են ինչ-որ հավելյալ փաստաթղթեր: Հարցմանը պատասխան դեռ չի ստացվել: Սակայն մեր ընկերության մասնագետները, կասկածելի համարելով, որ բոլոր 7 մասնակիցներից միայն մեկ մասնակցի հայտը շտկման կարիք չի ունեցել և ամբողջականորեն կրկնել է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրերը, փորձեցին ինքնուրույն գնահատել ներկայացված սարքի բնութագրերի համապատասխանությունը: Նախ և առաջ, ներկայացված առաջարկում նշված արտադրողի պաշտոնական կայքում ռենտգեն ապարատների մոդելային շարքի մեջ բացակայում է այն մոդելը, որով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը մասնակցել է մրցույթին: Փորձեցինք ինտերնետային հասանելի կայքերից գտնել այդ մոդելի մասին որևէ ինֆորմացիա, որը բացակայում է: Պահանջվող տեխնիկական բնութագրերից դատելով՝ Պատվիրատուն կարիք ունի բավականին հզոր և որակյալ սարքերի, որոնք, հավանաբար, օգտագործվելու են պոլիկլինիկական ծառայություն իրականացնող հիմնարկներում, ինչն էլ, հաշվի առնելով կորոնավիրուսային համաճարակը, կրկնակի պարտավորեցնող է թե Պատվիրատուի, և թե՛ հնարավոր մատակարարների համար: Փորձեցինք կապ հաստատել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած սարքի արտադրողի հետ: Արդյունքում ստացանք կատալոգ, որը պարունակում է նաև որոշ տեխնիկական պարամետրերի նկարագրություն: Ըստ այդ նկարագրության՝ մասնակցի

ներկայացրած տեխնիկական առաջարկը ճշգրիտ չէ: Պահանջվող և ներկայացված բնութագրերի միջև կան մի քանի տարբերություններ, մասնավորապես՝

Պահանջված բնութագիր	Ներկայացված բնութագիր	Իրական բնութագիր՝ ըստ կատալոգի
Բարձր հաճախականությամբ գեներատոր: Հզորությունը - 50 ԿՎտ	Բարձր հաճախականության գեներատոր: Հզորությունը՝ 50 ԿՎտ	Բարձր հաճախականության գեներատոր: Հզորությունը 60 ԿՎտ
Ժամանակային միջակայք – 1մվ – 10վ	ժամանակային միջակայք - 1մվ – 10վ	Ժամանակային միջակայք - 0,02 մվ – 6,3 վ
Ընթացիկ ժամանակի միջակայք 0.2մԱս~800մԱս	Ընթացիկ ժամանակի միջակայք՝ 0,2մԱս~800մԱս	Ընթացիկ ժամանակի միջակայք՝ 0,1մԱս~630մԱս
Հիվանդի սեղան Բարձրությունը՝ 680մմ ± 5%	Հիվանդի սեղան Բարձրությունը՝ - 680մմ	Հիվանդի սեղան Բարձրությունը՝ - 650մմ
Չափը՝ 2100մմ±820մմ ± 10%	Չափը՝ 2100մմx820մմ	Չափը՝ 2100մմx800մմ

Այս տեղեկություններից հետո նորից դիմեցինք Պատվիրատուին հայտնելով, որ մեզ մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել ընտրված մասնակցի հայտով ներկայացրած սարքի համապատասխանության վերաբերյալ և առաջարկեցինք, որպեսզի Պատվիրատուն օգտվի ՀՀ կառավարության 526-Ն կարգի 67-րդ կետով իրեն ընձեռնված հնարավորությունից ու դիմի իրավասու մարմիններին համապատասխանությունը հաստատելու կամ հերքելու նպատակով (գրությունը կից):

67. Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ինչպես և նախորդ դեպքում, այս գրությանն էլ Պատվիրատուն չի արձագանքել, ուստի Մարգ-Ֆարմացիա ընկերությունն ինքն է դիմել Ստանդարտացման և Չափագիտության Ազգային Մարմնին, որն այս պարագայում հանդիսանում է իրավասու մարմին: Իրավասու մարմինը նաև իրավասու է որոշել տեխնիկական բնութագրի համապատասխանությունը գործող տեղական և միջազգային նորմերին:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հոդված 34. Հայաերի գնահատումը

1.Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն գնահատող հանձնաժողովի անդամը՝

9) անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար.

59. Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

2) բացի հայտարարությունից, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Ըստ այդմ, կարող ենք ենթադրել, որ Գնահատող հանձնաժողովը օրենքով թույլատրված այլ միջոց չի ունեցել ներկայացված հայտի համապատասխանությունը գնահատելու համար, ինչի հետևանքով հայտը գնահատվել է պահանջներին բավարարող: Սակայն ներկայացված փաստերի հիման վրա մենք պնդում ենք, որ Գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի, ինչպես նաև հրավերի 8.2. կետի պահանջները, քանի որ առանց տեխնիկական բնութագրիչների վերաբերյալ ամբողջական փաստաթղթերի և հավաստի տեղեկատվության բավարար է գնահատել հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտման, այսինքն ձեռք է բերվում Պատվիրատուի կարիքների չհամապատասխանող ապրանք:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կասեցնել ընթացակարգը՝ մինչև իրավասու մարմնից պատասխան ստանալը:

2. Իրավասու մարմնի կողմից ընտրված մասնակցի ներկայացրած սարքը անհամապատասխան համարելու դեպքում պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղարկել 22.03.2021թ. կայացած նիստում 4-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը և մերժել ընտրված մասնակից ճանաչված մասնակցի հայտը և շարունակել գնահատման գործընթացը՝ հաջորդաբար տեղ զրաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման համար:

3. Իրավասու մարմնի կողմից տեխնիկական բնութագրերի ՀՀ և միջազգային նորմերին անհամապատասխան ճանաչելու դեպքում չեղյալ հայտարարել նշված չափաբաժնով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4910-2021 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից 31.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 08.04.2021թ.-ի թիվ 02/61-39380h գրությամբ, ներկայացնելով բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը, գրավոր դիրքորոշում չի հայտնել:

4. <u>Երրորդ անձ՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն 01.04.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

15.04.2021թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Երրորդ անձը հայտնել է հետևյալը.

«Բողոք ներկայացնող անձը ներկայացնում է այդ թվում նաև պահանջ և դիրքորոշում, որոնք վերաբերում են հրավերի՝ մասնավորապես, ապրանքի բնութագրի նկարագրության պահանջների հնարավոր խախտմանը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

<<2. Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

... 2) գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:>>:

Հետևաբար, բողոքն, այն մասով, որը վերաբերում է հրավերի պահանջներին, ենթակա մերժման առնվազն այն պատճառով, որ ներկայացվել է սահմանված ժամկետի

խախտմամբ: Բոլոր դեպքերում բողոքաբերը չի հիմնավորում այն, որ հրավերի պահանջների սահմանման առնչությամբ առկա է որևէ խախտում:

2. Բողոքաբերն անդրադառնում է ցածր գնին: Նշված հանգամանքը չի կարող որևէ իրավական նշանակություն ունենալ, քանի որ գների ներկայացման նվազագույն շեմ առկա չէ, և յուրաքանչյուր դեպքում մասնակիցն է որոշում իր կողմից առաջարկվող գինը:

3. Բողոքաբերը նշում է, որ ընտրված մասնակից ճանաչված անձի հայտը չի համապատասխանել հրավերի պահանջներին:

Որպես հիմնավորում, բողոքաբերը նշում է, որ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը չի բավարարում հրավերի պահանջներին:

Բողոքաբերը ներկայացնում է նաև ապրանքների բնութագիր, որն ըստ իրեն ստացվել է ապրանքն արտադրողից, և որի ուսումնասիրությունից բխում է, որ իբր մասնակցի ներկայացրած ապրանքի բնութագիրը չի համապատասխանում իրականությանը:

Առաջին հերթին պետք է նշել, որ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի բնութագրում մոդելը նշված է XRX630S, մինչդեռ բողոքաբերի այսպես ասած կատալոգում մոդելը այլ է՝ X630A: Հետևաբար, բողոքաբերի կողմից ներկայացված այդ փաստաթուղթը չի կարող ունենալ որևէ նշանակություն սույն բողոքի քննության համար:

Երկրորդ հերթին պետք է նշել, որ գնահատող հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության և դրանց՝ հրավերի պահանջների համապատասխանության հարցը պարզելիս՝ իրականացնում է համեմատություն հայտով ներկայացված ապրանքի բնութագրի և հրավերով պահանջվող ապրանքի բնութագրի միջև: Հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովը չի իրականացնում հավանականության գնահատում, թե արդյոք մասնակիցը կարող է նման ապրանք մատակարարել, թե ոչ: Այն կարող է պարզ դառնալ պայմանագրի կնքումից հետո, երբ տեղի է ունենում մատակարարվող ապրանքների հանձնում-ընդունում, որի ժամանակ միայն, եթե պարզվի, որ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի պահանջներին, ապա պայմանագիրը կարող է լուծվել կամ կիրառվել այլ բասացական հետևանքներ:

Ըստ այդմ, անհիմն է նաև բողոքաբերի այն դիտարկումները, որ անհրաժեշտ է դիմել իրավասու մարմիններին՝ իբր պարզելու, թե արդյոք մասնակցի կողմից ներկայացված տվյալները հավաստի են, թե ոչ:

Նման հարցումների իրականացումը համարվում է գնահատող հանձնաժողովի իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը: Բացի այդ, նշված կարգավորումը վերաբերում է մասնակցի այն տվյալներին, որը վերաբերում է մասնակցության իրավունքի չափանիշը

գնահատելուն: Այդպիսին չի համարվում մասնակցի կողմից ներկայացվող ապրանքի բնութագիրը: Վերջինս կարող է գնահատման առարկա համարվել այն տեսանկյունից, թե որքանով է համապատասխանում հրավերի պահանջներին:

Իր բողոքում, հենց բողոքաբերն է հաստատում, որ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Այդուհանդերձ, որպեսզի ավելի ակնհայտ դառնան բողոքաբերի անհիմն դատողությունները, կից ներկայացվում է արտադրող ընկերության կողմից ներկայացված գրությունները, որոնց համաձայն՝

1. Այլ հայկական ընկերությունների կողմից առաջարկվող արտադրանքի մոդելը չի կարող համարվել գնումներով պահանջվող մոդել,

2. Մատակարարվելիք ապրանքը համապատասխանելու է հրավերի պահանջներին (և դա պատահական չէ, քանի որ այս պարագայում, ապրանքի արտադրությունն իրականացվում է՝ ըստ պատվիրատուի պահանջների, իսկ պատվիրատուի՝ այսինքն, մասնակցի պահանջները բխում են հրավերի պահանջներից):»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երրորդ անձը Բողոքներ քննող անձին խնդրել է բողոքը մերժել, քանի որ այն ամբողջությամբ անհիմն է:

5. <u>ԳԲՔԱ-LO-2021/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 18.12.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 4-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ձեռքբերել հետևյալ ապրանքը. ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Բարձր հաճախականությամբ գեներատոր»*: Վերջինիս տեխնիկական

բնութագիրը սահմանվել է՝ *«Հզորությունը – 50 ԿՎտ: Խողովակի լարման միջակայքը – 40-150Կվ± 5%: Խողովակի առավելագույն լարումը – 10-630մԱ± 5%: Ժամանակային միջակայք – 1մվ-10վ: Ընթացիկ ժամանակի միջակայք 0.2մԱս~800մԱս: Ելքային հաճախականություն ≥ 200կհց± 5%: Հարթ պանելային դետեկտոր: Տեսակը՝ շարժական: Պատրաստված՝ Ամորֆ սիլիցիում և ցեզիումի յոդիդ: Դետեկտորի չափը՝ 17" x 17": Պիքսելային մատրիցա՝ 3072 × 3072: Էֆեկտիվ պիքսելների քանակը՝ 9,4 միլիոն± 10%: Պիքսելի չափը՝ 139μm± 5%: Տարածական լուծում՝ 3.6 LP / mm: A/D փոխարկման նիշը՝ 16 բիթս: Ցուցադրման ժամանակահատվածը՝ ≤ 3վ: Ռենտգեն Խողովակ: Պտտվող անոդային ջերմային հզորություն ≥300 KHU± 5%: Կիզակետային կետի չափը՝ 0.6 / 1.2mm: Ֆոկուզի հզորությունը՝ մեծ 77Կվտ; փոքր: 32Կվտ: Ռենտգեն Խողովակի կանգնակ: Խողովակի շուրջ հորիզոնական պտտման առանցքի անկյունը՝ ոչ պակաս ± 180 °: Սյունի ուղահայաց առանցքի շուրջ պտտման ահկյունը՝ ոչ պակաս ± 180 °: Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1200մմ± 5%: Սյունի երկայանական շարժման տիրույթը՝ 1700մմ± 5%: Գլխիկը, որտեղ տեղակայված է ռենտգեն խեղեվակը ունի մեծ, գունավոր հպումային 8'' էկրան, որը իրական ժամանակի ռեժիմով կապված է կառավարման վահանակի հետ ապահովելով պարամետրների ընտրման և տեղորոշման առավել արդյունավետ հնարավորություն: Ռենգենային նկարի կանգնակ: Ուղահայաց շարժումը՝ 1400մմ± 5%: Ցանցի չափը՝ ոչ պակաս քան 450x450 մմ± 5%: Ցանցի կոյֆիցենտը՝ ≥10: 1: Ցանցի խտությունը՝ ≥40 լ / սմ : Ֆոկուսի հեռավորությունը՝ 130սմ± 5%: Հիվանդի սեղան: Տեսակը՝ շարժական: Տարողությունը՝ ≥ 200կգ± 10%: Բարձրությունը՝ 680մմ ± 5%: Չափը՝ 2100մմx820մմ ± 10%: Երկայանական շարժումը՝ 250մմ± 5%: Հորիզոնական շարժումը՝ 900մմ± 5%: Դետեկտորի պնակի շարժումը՝ 500մմ± 5%: Ցանցի չափը՝ ոչ պակաս քան 450x450 մմ± 5%: Ցանցի կոյֆիցենտը՝ ≥10: 1: Ցանցի խտությունը՝ ≥40 լ / սմ: Աշխատանքային կայան: Ծրագրային ապահովում՝ գրանցում, հիվանդների կառավարում, ստուգումների կառավարում, նկարների մշակում, նկարների պատկերման համակարգ, պատկերների տպագրություն, տպագրության հաշվետվություն: DICOM 3.0 ներառում է DICOM աշխատանքային ցանկ, DICOM պահպանում SCU, DICOM պահպանում SCP: Սխեմատիկ տեղորոշման /positioning/ ցուցիչ: Բարձր լարման գեներատորի և հարթ պանել դետեկտորի կապի վերահսկում: Ամբուլատոր, արտակարգ ռեժիմ: Պատկերի մշակման advanced ֆունկցիա . Գամմայի ճշգրտում; մուլտի-LUT կորի կարգաբերում, աղմուկի նվազեցում, պատկերի բարելավում և այլն: Համակարգի դիագնոստիկա և համակարգի կարգավիճակի իրական ժամանակում արձանագրում: Ներառում է մոնիտոր 22" ± 5%, համակարգիչ, ռենտգեն պաշտպանիչ ապակի 120x80սմ: Սերտիֆիկատներ՝ ISO 9001 կամ ISO 13485»:*

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 4-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել նաև «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն և «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.03.2021թ.-ի նիստի թիվ 13 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ 22.03.2021թ.-ին, ժամը 11:00-ին:

vi. Հանձնաժողովի 22.03.2021թ.-ի նիստի թիվ 14 արձանագրության համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն, իսկ հաջորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն:

vii. 23.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որով անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

viii. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ներկայացրած հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է XINDRAY MEDICAL Internatio nal Co. Ltd. Ընկերության կողմից արտադրվող XRX630S 500Ma x- ray Radiograph System ֆիրմային անվամբ Xindray ապրանքային նշանով XRX630 S մակնիշի ապրանքը, որն ունի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Բարձր հաճախականությամբ գեներատոր: Հզորությունը – 50 ԿՎտ: Խողովակի լարման միջակայքը - 40-150Կվ: Խողովակի հոսանքի միջակայքը - 10-630մԱ: Ժամանակային միջակայք - 1մվ-10վ: Ընթացիկ ժամանակի միջակայք 0.2մԱս~ 800մԱս: Ելքային հաճախականություն > 200կհց: Հարթ պանելային դետեկտոր: Տեսակը՝ շարժական: Պատրաստված՝ Ամորֆ սիլիցիում և ցեզիումի յոդիդ: Դետեկտորի չափը՝ 17” x 17”: Պիքսելային մատրիցա՝ 3072 x 3072: Էֆեկտիվ պիքսելների քանակը՝ 9,4 միլլիոն: Պիքսելի չափը՝ 139բտ: Տարածական լուծում՝ 3.6 LP / mm A/D փոխարկման նիշը՝ 16 բիթ: Ցուցադրման ժամանակահատվածը՝ < 3վ: Ռենտգեն Խողովակ: Պտտվող անոդային ջերմային հզորություն >300 KHU: Կիզակետային կետերի չափը՝ 0.6 / 1.2mm: Ֆոկուսի հզորությունը՝ մեծ 77Կվտ; փոքր 32Կվտ: Ռենտգեն Խողովակի կանգնակ: Խողովակի շուրջ հորիզոնական պտտման առանցքի անկյունը՝ ± 180 °: Սյունի ուղահայաց առանցքի շուրջ

պտտման անկյունը՝ ± 180 °: Խողովակի ուղահայաց շարժման տիրույթը՝ 1200մմ: Սյունի երկայանական շարժման տիրույթը՝ 1700մմ: Գլխիկը, որտեղ տեղակայված է ռենտգեն խողովակը ունի մեծ, գունավոր հպումային 8'' էկրան, որը իրական ժամանակի ռեժիմով կապված է կառավարման վահանակի հետ ապահովելով պարամետրերի ընտրման և տեղորոշման առավել արդյունավետ հնարավորություն: Ռենգենային նկարի կանգնակ: Ուղահայաց շարժումը՝ 1400մմ: Ցանցի չափը՝ 450x450 մմ: Ցանցի կոյֆիցենտր՝ >10: 1: Ցանցի խտությունը՝ >40 լ / սմ Ֆոկուսի հեռավորությունը՝ 130սմ: Հիվանդի սեղան: Տեսակը՝ շարժական: Տարողությունը՝ > 200կգ: Բարձրությունը՝ 680մմ: Չափը՝ 2100մմx820մմ: Երկայանական շարժումը՝ 250մմ: Հորիզոնական շարժումը՝ 900մմ: Դետեկտորի պնակի շարժումը՝ 500մմ: Ցանցի չափը՝ 450x450 մմ: Ցանցի կոյֆիցենտը՝ >10: 1: Ցանցի խտությունը՝ >40 լ / սմ: Աշխատանքային կայան: Ծրագրային ապահովում՝ գրանցում, հիվանդների կառավարում, ստուգումների կառավարում, նկարների մշակում, նկարների պատկերման համակարգ, պատկերների տպագրություն, տպագրության հաշվետվություն: DICOM 3.0 ներառում է DICOM աշխատանքային ցանկ, DICOM պահպանում SCU, DICOM պահպանում SCP: Սխեմատիկ տեղորոշման /positioning/ ցուցիչ: Բարձր լարման գեներատորի և հարթ պանել: դետեկտորի կապի վերահսկում: Ամբուլատոր, արտակարգ ռեժիմ: Պատկերի մշակման advanced ֆուկցիա: Գամմայի ճշգրտում; մուլտի-LUT կորի կարգաբերում, աղմուկի նվազեցում, պատկերի բարելավում և այլն: Համակարգի դիագնոստիկա և համակարգի կարգավիճակի իրական ժամանակում արձանագրում: Ներառում է մոնիտոր 22" համակարգիչ, ռենտգեն պաշտպանիչ ապակի 120x80սմ: Սերտիֆիկատներ՝ ISO 9001 կամ ISO 13485:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից 31.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն

կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 18.12.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ

բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 18.12.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան, որին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն 22.03.2021թ.-ին ժամը 11:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին արդյունքում ճանաչվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5» ծածկագրով գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի ընտրված և հաղթող մասնակից, իսկ հաջորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված

էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Բողոքաբերը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Սույն գործով «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկված XINDRAY MEDICAL Internatio nal Co. Ltd. Ընկերության կողմից արտարդվող XRX630S 500Ma x- ray Radiograph System ֆիրմային անվամբ Xindray ապրանքային նշանով XRX630 S մակնիշի ապրանք գոյություն չունի կամ եթե գոյություն ունի, ապա այդ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Բողոքաբերն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ավելին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բողոքի քննության ընթացքում երրորդ անձի կողմից ներկայացվեցին XINDRAY MEDICAL Internatio nal Co. Ltd. Ընկերության կողմից տրամադրված արտադրողի երաշխիքային ու մրցույթի թույլտվության նամակները՝ ի հավաստում առաջարկվող ապրանքի՝ Հրավերի տեխնիկական պայմաններին համապատասխանելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից 31.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/25 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**